«Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի և «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Պետական գույքի հաշվառման և գրանցամատյան վարելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 282 որոշումը մասնակիորեն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 562-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.7-րդ և 1.8-րդ կետերով.

«1.7. Հաստատել պետական գույքի հաշվառման գրանցամատյանից տեղեկատվություն տրամադրելու կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

1.8. Հաստատել պետական գույքի հաշվառման գրանցամատյանից տեղեկատվություն տրամադրելու տեղեկանքների ձևերը՝ համաձայն N 4 հավելվածի:».

2) որոշման 1-ին կետով հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Պետական գույքի հաշվառում է համարվում պետական գույքի վիճակի և չափերի, նպատակային նշանակության, ինչպես նաև օգտագործողների և օգտագործման ձևերի մասին տեղեկությունները պետական գույքի հաշվառման գրանցամատյանում գրանցելը:»,

բ. 3-րդ կետում «(բացառությամբ հողի)» բառերը փոխարինել «(բացառությամբ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու չկառուցապատված հողի)» բառերով, իսկ «ոչ նյութական ակտիվները» բառերը՝ «մտավոր սեփականության օբյեկտները» բառերով,

գ. 9-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) գրանցամատյանում ներառված որևէ գույքի բնութագրիչների փոփոխության, ինչպես նաև նոր գույքի ավելացման կամ գրանցամատյանում ներառված որևէ գույքի դուրսգրման դեպքում պետական կառավարման մարմինների ղեկավարները 10 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին պետք է տեղեկացնեն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը.»,

դ. 10-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում «ոչ նյութական ակտիվների» բառերը փոխարինել «մտավոր սեփականության օբյեկտների» բառերով,

ե. ուժը կորցրած ճանաչել 10-րդ կետի «ե» ենթակետը.

3) որոշման N 2 հավելվածի՝

ա. NN 1 և 5 ձևերի վերնագրերում և N 1 ձևի 5-րդ սյունակում «ոչ նյութական ակտիվներ» բառերը փոխարինել «մտավոր սեփականության օբյեկտներ» բառերով և իրենց համապատասխան հոլովաձևերով,

բ. N 2 ձևի 2-րդ տողից հանել «փոստային դասիչը» բառերը, ինչպես նաև 3-րդ, 15-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ և 26-րդ տողերը,

գ. N 3 ձևից հանել 2-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ տողերը,

դ. N 4 ձևի առաջին տողում «(պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի (բաժնեմասի) կառավարման լիազորություններն իրականացնող իրավաբանա-

կան անձանց մասին)» բառերը փոխարինել «(պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի (բաժնեմասի) կառավարման լիազորություններն իրականացնող պետական մարմնի անվանումը)» բառերով,

ե. N 5 ձևը «III. Աշխարհագրական նշումներ և արտադրանքի ծագման տեղանուններ, ընդամենը» և «այդ թվում՝» տողերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով՝ համապատասխան սյունակներով.

«

Գ. Մտավոր սեփականության այլ օբյեկտները					
այդ թվում՝					

».

4) որոշումը լրացնել նոր՝ NN 3 և 4 հավելվածներով՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. օգոստոսի
Երևան